

تَنْبِيْهُاتٌ

مَحَلَّةُ جَمْعِيَّةِ الْقَاهِرَةِ الْخَيْرِيَّةِ الْأَرْمَنِيةِ الْعَامَّةِ

ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՃԻՐԷԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵՆԸ

للدير المسئول: أ. صاروخان — شارع عماد الدين بالقاهرة — تليفون ٩١٩٦٣٦ — ص.ب. ٧١٧

ԺԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 10 - 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1973



Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

1173-1973

Գործ՝ ԱԲՐԱՀԱՄ ԳՈՒՐԳԵՆԵԱՆԻ

Ա Ձ Դ

— Տեղեկատուին առ այժմ կը հրատարակուի պարբերաբար:
— Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, քերթերու եւ հանդեսներու առարքումները կատարել խմբագրութեան հասցեին.

Խմբագրութիւն «ՏԵՂԵԿԱՏՈՒ»Ի

15, Էմատ Էլ Տին փողոց — Գահիրէ

Հեռ.ախօս 919636 — Նամակատուի 717

Ճ Շ Դ Ո Ի Մ

11 րդ եջին լուսանկարին տակ կարգալ այսպէս՝

Ձախէն աջ.— Ն. Ծ. Թ. Վրդ. Քեհեայեան, Պր. Մ. Հայկենց, Նախագահ Ալէք Մանուկեան, Բարձ. Արք. Ս. Մանուկեան, Պր. Ն. Ֆոհեկեան եւ Վեր. Գ. Սիսեան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

- 1.— Եգիպտահայութիւնն ու Միջին Արեւելի վերջին Պատերազմը
- 2.— Ա. Ներսէս Շնորհալիի Կեանքն ու Գործը
ՅՈՎՀ. ՎՐԳ. ԱՀՄԱՐԱՆԵԱՆ
- 3.— Միութեան Երկ. Վարժարաններու Սաներու Համագումարը
- 4.— Երգ Նոր Տարույ **ԶԱՐԵՀ ՄԵԼՔՈՆԵԱՆ**
- 5.— Հ.Բ.Ը.Մ.ի Գ. Համաեխարհային Պատգամաւորական Խորհրդակցական Ժողովը
- 6.— Պր. Ալ. Սարուխանի Շրջապայտը
- 7.— Հ.Բ.Ը. Միութեան 60րդ Ընդհանուր Ժողովը
- 8.— Հ.Բ.Ը. Միութեան 1972-1973 Տարեւերջանի Երջանաւարները
- 9.— Նոր Կեդրոն մը Թորոնթոյի Մէջ
- 10.— Հ.Բ.Ը.Մ.-Նուպարի Պատէթ Պուլի Հայկական Մրցաւարը
- 11.— Աղեփսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-Նուպարի Յորելինական շեղ պարահանդէսը

توزيع آدو

محلّة جمعيّة القاهرة الخيريّة الأرمينية العامّة

ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԵՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՏԻՐԷԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵՆԸ

الدير المسئول : ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص.ب. ٧١٧

ԺԶ. ՏԱՐԻ ԹԻԻ 10 - 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1973

ԵԳԻՊՏԱՀԱՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անբողջ արարական աշխարհը, մանաւանդ մեր երկրորդ հայրենիք՝ Եգիպտոս, ճակատագրական օրեր անցուց ու ֆայտի պայքար մղեց Իսրայէլի դէմ, վերագրաւեղու հասնար խրեկ անխրաւօրեկ բռնագրաւուած հողերը:

Այս ուղղութեանը Գանիրիի թե Ադիֆ-սանդրիոյ Ազգ. Իշխանութիւնները կոչեռով ողբերեցիկն եգիպտահայութիւնը ու նախաձեռնեցիկն նուիրահաւաքումի աշխատանքի, ինչպիս նաեւ մասնաւոր աղօթք ու մատրանք մասուծեցիկն

մեր հերոսական բանակիկն յաղթութեան հասնար:

Այս առթիւ եղան ինքնաբոխ շօշափեղի նուիրասուրբիւններ անհասներե, հայկական հասասուրբիւններե, մշակութայիկն, մարզական թե բարեխրական կազմակերպութիւններե եղն, որով վերջուր յանձնուեցան Պատերազմական ձիգի փոնքի վարչութեան:

Մեր ազ մատրանքիկն է, որ յաղթութեանք պատրի Եգիպտոսի Ժողովուրդիկն գոնողութիւններն ու հայրենասիրութիւնը:

Ս. ՆԵՐՍԷՍ ԶՆՈՐՀԱԼԻԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՇՐՋԱՆ. —

Ս. Ներսէս Շնորհալիիկն պանծալի դէմքը եւ անծը աւելի լաւ ճանչնալու համար, շատ կարեւոր է նախ ազնարի մը նետել ազգ շրջանիկն յուզուող խնդիրներուն եւ մանաւանդ, քաղաքական վիճակիկն վրայ:

Շնորհալիի ապրած ժամանակաշրջանիկն գրեթէ ամէն տեղ, մերձաւոր սահմաններուն վրայ եւ մանաւանդ հոն ուր ինքը

կ'ապրէր, ամէն ինչ շարժման փոփոխութեան եւ անհաստատ վիճակիկն մատնուած էր: Պատճառներն էին հետեւեալ չորս մեծ ազգերը. —

Ա. — Առաջինն էր յոյներու ազգը, շատոնց բնիկ տէրը երկրիկն, իրեն իշխանը արեւելեան ինքնակալութեան ուր սակայն, սկսած էր արդէն կողոպտուիլ եւ նուազիլ, նախ արարներու է յետոյ սելճուք թուրքերու կողմէ որոնք զանազան ամիրանիք եւ

սուլթաններ անուանած էին Միջագետքի, Ասորեստանի եւ Փոքր Ասիոյ գաւառներուն մէջ:

Բ. — Երկրորդ եւ ամէնէն ահարկու ազգն էին սելճուք թուրքերը: Ասոնց զօրաւոր տէրութիւններն էին Իկոնիոյ սուլթանները Սեբաստիոյ եւ Կեսարիոյ Տանիւլմէնդը: Հալէպի եւ Տամասկոսի ամիրաները (սուլթանները) եւ հաշիւի վրանաբնակ աւազակները, Անտիոքի եւ Տրիպոլիի իշխանութեան տակ:

Գ. — Երրորդ ազգը լատիններն էին, որոնք ժԱ. դարու վերջերը՝ առաջին Սաչակիրներու յաջողութեամբ տիրած էին Պաղեստինէն զատ՝ Անտիոքի, Եգիպտոյ, Տրիպոլիի, Տիւրոսի, Սիդոնի, եւայլն... Ինչպէս նաեւ եփրատի արեւմտեան գաւառներուն թիւին մէջ՝ հայերուն եւ ասորիներուն: Այդ կողմերը զանանան «բրինձ»-ներ (prince) հաստատած էին, որոնք ոչ միայն թուրքերու եւ յոյներու՝ այլ նաեւ իրարու մէջ կը կռուէին, խլելով իրարու ձեռքէն դրաւուած կալուածներ:

Դ. — Չորրորդ ազգը մեր հայ ազգն էր որ, յոյներէն վերջ (եւ նոյնիսկ անոնց հաւասար), այդ կողմերու բնական ժողովուրդը դարձած էր:

Արծրունիներու հարստութենէն 20 տարիներ չանցած, 1045 թուականին, յոյները գրաւած էին Վասպուրականը եւ մանաւանդ, Անին՝ Բագրատունիներու հրաշագեղ քաղաքը, ուրիշ մեծ քաղաքներ կցելով նաեւ իրենց տիրապետութեան: Անոնք ամէն ջանք կը թափէին հայերը իրենց բնիկ երկրէն գաղթել տալ: Իրենց գրաւած նահանգներուն մէջ, անոնք կը ստեղծէին քաղաքական ծանր պայմաններ ու կրօնական հալածանք:

Յունական այս քաղաքակրթութեան հետեւանքով, Հայաստանի ամէնամեծ եւ բազմաբնակ Վասպուրական մասէն միայն, բնակիչներուն մէկ երրորդը գաղթեց իր բնիկ երկրէն:

Եւ ահա, այս բոլորին հետեւանքն եղաւ որ սելճուքները անարգել մտան Բիւզանդական տիրապետութեան տակ գտնուող երկիրները եւ մանաւանդ Հայաստանը կոտորելով, աւելելով ու անապատի

վերածելով իրենց ոտք դրած վայրերը:

Այսպէսով՝ արեւմուտքէն Բիւզանդական, եւ արեւելքէն՝ սելճուքեան բռնակալ լուծը անտանելի դարձուց հայ խաղաղ ժողովուրդին կեանքը: Սպառնացող վտանգի տակ էին հայուն կեանքն ու ինչքերը:

Քաղաքական այս աննպաստ պայմաններու տակ, հայերը ստիպուեցան զէնչով իրենց ճամբայ բանալ, Փոքր Ասիոյ հին հարաւային գաւառներուն՝ Փոլիպոլոյ, Իսաւրիոյ, Պամփիլիւայի եւ Կիլիկիոյ ամրագոյն տեղերը ապաւինել, Տաւրոսի եւ Անտիտաւրոսի կիրճերը եւ սարերը իրենց ապաստան ընտրել. անկէ ետք, կամաց կամաց բարձունքներէն իջնել եւ Կիլիկիոյ գեղեցիկ դաշտերուն մէջ ոտք զնելով ետ մղել յոյները, եւ տիրել նախ բերդերուն եւ ապա, մեծ եւ անուանի քաղաքներուն. Անարզարայի, Մամեստիոյ եւ նոյնիսկ մայրաքաղաքին Տարսոնի, եւ միանգամայն տիրանալ լեռներուն, դաշտերուն եւ ծովեզերային մասին:

Սակայն այս գաղթին յաջողութիւնն ու հաստատունն եւ կանոնաւոր տիրապետութիւնը դար մը ժամանակ պահանջեց հայերէն, ինչպէս նաեւ շատ ջանքեր եւ ճարտարութիւններ, մեծամեծ նեղութիւններ եւ աւելի մեծ քաջութիւններ: Մէկ խօսքով՝ հայերը իրենց արեան գնով կրցան տիրանալ Կիլիկիոյ, մինչեւ որ 1080 թուականին, Գսոռղոմով գիւղին մէջ կանգնուեցաւ Ռուբինեանց քաջաժառանգ տէրութիւնն ու թագաւորութիւնը:

Այդ տեսն, բուն Հայաստանի տարբեր գաւառներէն, Կիլիկիոյ շրջանները գաղթեցին ու իրենց բնակութիւնը հաստատեցին, կարգ մը ազգեցիկ իշխաններ ու տոհմեր, ինչպէս Օշին իշխանը, Քեսունի իշխան Վասիլը (Գոյ Վասիլը), Ներսէս Շնորհալիի հայրը՝ Ապիրատ իշխանը եւ շատ ուրիշներ:

Ահա, այս հարիւրամեայ բազմաշփոթ եւ բազմակուր ժամանակին մէջ է որ Շնորհալին ապրեցաւ, իբրեւ լեռնային եւ կռիւտոտ երկրի մը մէջ արծաթափայլ վտակ մը, սողոսկելով եւ սահելով, ժայրերէ եւ խոչերէ արգիւրեւելով, բայց ոչ առանց

դժուարութեան՝ այլ միշտ հանդանտօրէն յառաջ երթալով:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ ԿԵԱՆՔԸ . —

Գրիգոր Մագստրօսի աղջկան Ապիրատ որդւոյն տղան էր Ներսէս Շնորհալին եւ Գրիգոր Վկայասէրին քրոջ թոռնիկը: Շնորհալիի հայրը՝ Ապիրատ իշխանը, ինչպէս նաեւ շատ մը հայ ԺԱ. դարուն բուն Հայաստանէն գաղթած էր դէպի Կիլիկիա, եւ Մարաշի կողմերը բնակած: Մովք կոչուած ամուր բերդին մէջ ուր աշխարհ կու գայ Ներսէս Շնորհալին: Մենդեան թուականը վիճարանուած է. ըստ Չամչեանի, ան ծնած է 1098-ին կամ 1100-ին, ըստ Գ. Յակոբեանի եւ Ալիշանի՝ 1102-ին:

Ներսէս, 10 տարեկան հասակին, այսինքն՝ 1110 թուականին, կորանցուց իր հայրը՝ Ապիրատը որ ծովք բերդին պաշտպանութեան ատեն նետահար՝ սպաննուեցաւ: Այսպէսով, մանկութենէն ի վեր, Ս. Ներսէսի գաստիարակութիւնը յանձնուեցաւ Գրիգոր Վկայասէրին եւ Բարսեղ կաթողիկոսին: Իմաստասիրական ուսումը ստացաւ Ստեփանոսի՝ Կարմիր վանքին առաջնորդին ձեռքին տակ:

1113-ին, Ներսէսին մեծ եղբայրը՝ Գրիգոր, կաթողիկոս կ'ընտրուի Կարմիր վանքին մէջ, 18 տարեկանին: Իսկ Ներսէս, 16 տարեկան հասակին, քահանայ կը ձեռնադրուի իր կաթողիկոս եղբոր՝ Գրիգոր Պահլաւունի ձեռքով եւ ընդմիշտ կը կապուի անոր, դառնալով կաթողիկոսին գործակիցն ու օգնականը, եւ մեծ հեղինակութիւն կը վայելէ որպէս ականաւոր եկեղեցական, մատենագիր, բարեկարգիչ եւ բանաստեղծ:

Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսը, որ 1116-ին Կարմիր վանքէն ստիպուած էր ծովք բերդը փոխադրել կաթողիկոսական աթոռը, շրջան մը վերջ անդրադարձաւ որ ծովք բերդն ալ անապահով էր, ուստի զայն թողուց եւ կաթողիկոսական աթոռը փոխադրեց Եփրատ գետին աջ կողմը գտնուող Հոռոկիայ ամրագոյն բերդը: Ալիշան կը գրէ. «Հաւանական երեւի որ այս նոր բնակութեան եւ նոր աթոռոյն մէջ Ներսէս

ընդունեցաւ եպիսկոպոսական օծումը, իր եղբորը ձեռքէն եւ անոր հրամանաւ քան խնդրանօք. վասն զի Շնորհալի, իր սովորական պարկեշտութեամբ եւ խոնարհութեամբ, կը զգուշանար ամէն պատուաւոր աստիճանէ՝ թէեւ անկարելի էր ետ կենալ այնպիսի ձեռնադրիչ մ'ունենալով, որ թէ ուրիշ նկատմունք չունենար՝ նայնիսկ կաթողիկոսական աթոռն ալ կ'ուզէր շուտով թողուլ իր հարագատ եւ աւելի շնորհագարդ եղբոր» (1):

Գրիգոր Պահլաւունին, այս ժողովէն երեք ամիս ետք կը վախճանի եւ Ներսէսի աշխոյժ սովորուն կը յանձնուի համայն ազգին հոգեւոր խնամքը:

Շնորհալին միայն եօթը տարիներ քնաց կաթողիկոսական դահլին վրայ, բայց այդ տարիները ըրկ'նաւոր գործունէութեամբ եւ եռանդով լի նշանակալից տարիներ եղան Հայ Եկեղեցական Պատմութեան համար: Արդարեւ, իր կաթողիկոսութեան կարճ ժամանակաշրջանին մէջ մեծ գործունէութիւն ունեցաւ . —

— Հաշտեցուց Օշին եւ Թորոս իշխանները, որոնք զանոնք զանազան խնդիրներու պատճառաւ իրարու հետ գժտուած էին:

— Շնորհալին նշանաւոր է նաեւ իր համամիութենական եռանդով եւ գործունէութեամբ: Արդարեւ, Կիւ Մանուէլ կայսրին հետ նամակներով եւ դեսպաններով շատ յառաջ տարաւ հայերու եւ յոյներու միջեւ միաբանական խնդիրը, զոր սակայն չկրցաւ յաջողութեամբ պսակել, իր մահուան պատճառաւ:

— Միասային ասպարէզին մէջ, ան կարգաւորեց հայկական արարողութիւնները որոնք, իր ժամանակաշրջանին բազմապիսի ձեւերով կը կատարուէին, տեղերու համաձայն, նայնպէս՝ ժամերգութիւններուն մէջ բազմաթիւ և նորանոր հոգելից երգեր ներմուծեց:

— Ս. Պատարագը ճոխացուց գեղեցիկ աղօթքներով եւ եղանակներով, եւ Մաշ-

(1) Ա. Ի. ՇԱՆ, Ղեւոնդ, « Նորհալի եւ պարագայ իւր », Վեհտիկ 1873, էջ 108:

տոցը՝ վայելուչ եւ իմաստալից արարողութիւններով:

— Ինչպէս նաեւ գիտենք, ճոխացուց մանաւանդ մեր հայ շարականները հոգեբուխ տալերով եւ շարականներով որոնք մեզի համար, այսօր, մէջմէկ գանձեր են:

Շնորհալին այս իր եռանդուն գործունէութեամբ մեծ համբաւ ու յարգանք շահեցաւ ամէնուն կողմէ:

Ս. Ներսէս, իր մահուընէ մը քանի տարիներ առաջ ծանրօրէն հիւանդացած էր, եւ այժմ, իր ծերութեան կը դիզուէին կաթողիկոսական հոգերն ու յոգնութիւնները: Ս. Ներսէս Լամբրոսացին կ'ըսէ թէ իր վերջին տարիներուն, Շնորհալին պարբերական ջերմէն զատ սնէր նաեւ տկարութիւն մըն ալ որ գուցէ զօրացած ըլլայ իր տարիքով, ու այսպէսով՝ տարիներով աշխատած եւ յոգնած մարմինը աւելի տկարացուցած ըլլայ:

«Ներսէս Շնորհալին, կը գրէ Գ. Յակոբեան, մինչեւ իր կեանքի վերջն ապրում է Հոռովկայում. եւ այդ պատճառով էլ մեր հին գրականութեան ու եկեղեցւոյ պատմութեան մէջ նա կոչուում է նաեւ Ներսէս Կլայեցի» (2): Կլայեցի բառը յառաջ եկած է թաթարական «Կալա» եւ «Պալա» բառերէն, որ կը նշանակեն բերդ: Այսպէսով՝ «Հոռովկա» կը նշանակէ յոյներու կամ հոռոմներու բերդ:

Ս. Ներսէս Շնորհալի աշքերը կը փակէ Հոռովկա բերդին մէջ 1173-ին, 71 տարեկան հասակին, բազմարդիւն եւ բեղմնաւոր կեանք մը անցընելէ ետք:

ՄԱՐԳԸ. —

Կը գրէ Գ. Յակոբեան. «Շնորհալին մեր միջնագարի ամենամեծ բանաստեղծներից է եւ խոշորագոյն մատենագիր եւ եկեղեցական գործիչ: Նա իր թէ արձակ եւ թէ չափածոյ գործերում կրօնական շնչով, բայց բոտ էութեան արատյայտել է իր մամանակին ազգային, քաղաքական տրամագրութիւնները հայկական աւատական պետութեան եւ եկեղեցու զազափա-

ռախօսութիւնը: Միաժամանակ մեծ հայրենասէր է Շնորհալին ու լաւատես, հայ ժողովրդի ապագայ լաւ օրուան հաւատացող բանաստեղծ եւ հայրենասէր հոգեւորական: (․․․) նրա բոլոր գործերում, այսպէս թէ այնպէս, այս կամ այն չափով, միշտ էլ գերիշխողը ազգային-կրօնական, եկեղեցական ու հայրենասիրական տրամագրութիւններ են եղել» (3):

Ս. Ներսէս, մեր ազգային պատմութեան մէջ ճանչցուած է աւելի Շնորհալի-ի գեղեցիկ եւ վայելուչ տիտղոսով: Շնորհալիի ԳՈՐԾԵՐԸ. —

Ինչպէս գիտենք եւ ինչպէս կը վկայեն բոլոր պատմաբաններն ու հայկական միջնագարի մասնագէտները, Շնորհալին ամենամեծ մատենագիրներէն մին էր զած է. փայլած է թէ բանաստեղծական եւ թարծակ էջերով եւ այսպէսով ան մեզի կը ներկայանայ որպէս հայկական միջնագարի ամէնէն աչքառու գրական դէմքերէն մին: Արդարեւ, իր գրական երկերը յօրինած է ոտանաւորով, իսկ արձակ լեզուով գրած է իր պաշտօնին վերաբերեալ գործերը:

1. — Շնորհալին առաջին գրական գործը եղած է ՎիՊԱՍԱՆՈՒԹԻԻՆԸ՛ որ շարագրած է 1121-ին, այսինքն՝ 20 տարեկան հասակին, երբ դեռ «անկատար հասակաւ» էր, ինչպէս ինքը կը հաստատէ:

2. — Սակայն ան նշանաւոր է մանաւանդ իր ԸՆԴՂԱՆԵՐԱԿԱՆ ԹՈՂԹՈՎ, ուղղուած ամբողջ հայ ազգին:

3. — Գրած է անհամար բանաստեղծութիւններ, որոնց մէջ առաջին տեղը կը գրաւէ ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ ԲԱՆԵՐՈՎ սկսող 4000 տողոց ոտանաւորը:

4. — Շնորհալին նշանաւոր է նաեւ ՈՂԲ. ԵԴԵՍՈՒՅՑ հոգեշունչ եւ սքանչելի ոտանաւորով, յօրինուած Ապիրատ ազգականին խնդրանքին վրայ:

5. — Ունի նաեւ ԲԱՆ ՀԱՆԱՏՈՅ տիտղոսով 1500 տողոց ոտանաւորը որուն մէջ կը զգացուի Ներսէսի հաւատացեալ եւ աստուածավախ հոգին:

(2) ՅԱԿՈԲԵԱՆ Գ., «Էջմիածին» ամսագիր, 1957 թ, էջ 44:

(3) ՅԱԿՈԲԵԱՆ Գ., «Էջմիածին» ամսագիր, 1957 (թ), էջ 44:

6.— Մինչ ԳԻՐԲ ՃԳԻՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՑ-ը գրած է իր քահանայական ձեռնագրութեան առթիւ: Ասոր նման կարգ մը գրուածքներ ունի որոնք, սակայն, մեզի չեն հասած:

7.— Շնորհալին նշանաւոր է նաեւ իր ՀԱՍՈՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ երկնասուսց ազօթքով որ այսօր 24 լեզուներու թարգմանւած է:

8.— Շնորհալին գրած է բազմաթիւ ԱՌԱԿՆԵՐ, ԱՌԵՂԾՐԻՒՄ ՆԵՐ և ՀԱՆՆԵՂՈՒԿՆԵՐ:

9.— Հարստացուցած է նաեւ գրականութիւնն ու եկեղեցին բազմաթիւ ՃԱՌԵՐ-ով և Ս. Գրքի մեկնութեամբ: ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ առաւարտ ձգած է իր մահուան պատճառաւ:

10.— Շնորհալին ունի նաեւ հարուստ ՆԱՄԱԿՎՆԻ մը, նշանաւոր են իր ԹՈՒՂԹԵՐԸ ԱՌ ԿԻՌ ՄԱՆՈՒԷՂ ԿՈՅՍՐ-ը համամիութենական հարցին շուրջ:

11.— Կը գրէ Չամչեան, «Եւ զի ունէր զաստուածատուր ձիրս ի յօրինուածս չափարեքական և երաժշտական երգոց ի գործ եղեալ զնոյն ընդ իւրում անհամեմատ և հոգիազարգ հանճարոյ՝ յօրինեաց զայլ ևս բազում երգս սքանչելարուեստ շարականաց և քաղցր մեղեդեաց, տաղից և գանձուց ի պայծառութիւն Եկեղեցւոյ յոր վայելեմք մինչև ցայսօր» (4):

12.— Շնորհալին ունի նաեւ բազմաթիւ երկրորդական գործեր որոնցմէ մի քանիները.—

ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻՑ ԵՒ ԶԱՐԳՈՒՑ ՆՈՐԻՆ, Մխիթար Հեքացիի ուղղուած ՅՈՐԴՈՐԱԿ մը, Մեկնութիւն Դաւիթ Անյաղթի ՆԵՐԲՈՂ ԽԱԶԻՆ գործին, ՄԵԿՆՈՒԹԻՒՆԻՔ ԻՄԱՍԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՆԻՑ, ԱՍՏԻՃԱՆՔ ԱԶԳԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՍԱՐԳՍԻ, և մի քանի թարգմանութիւններ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԳ. ԱՀՄԱՐԱՆԵԱՆ
Զմմառոն Միաբան

Գահիրէ

(4) ԶԱՄՉԵԱՆ Միքայէլ, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ 1786, էջ 84:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԿՐ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՍԱՆԵՐՈՒՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿԸ ԿԱԶՄԷ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԻՒՆ ՄԸ

Օգոստոս 16-18ին Տրքոյի մէջ կայացաւ Հ.Բ.Ը. Միութեան Սիջին Արեւելքի երկրորդական Վարժարաններու ամերիկաբնակ շրջանաւարտներուն եւ սաներուն համագումարը, նախաձեռնութեամբն ու հրահրովը Նախագահ Ա. Մանուկեանի եւ կազմակերպութեամբ Կարգադիր Յաննախանի մը:

Սելզքեան երթական Հաստատութեան, Դարահի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանի, Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանի եւ այլ պարոցներու առէլի քան 150 երկսեռ շրջանաւարտներ եւ սաներ մասնակցեցան իր տեսակին մեջ եզակի այս հաւաքին, որ իր լուրջ նիստերով, տիրող մթնոլորտով եւ հետապնդած նպատակներով, կոչուած է բախտորոշ դեր մը կատարելու ամերիկահայ կեանքին մէջ:

Այդ առթիւ միաձայնութեամբ եւ խանդավառութեամբ որոշուեցաւ կազմել Հ.Բ.Ը. Միութեան Վարժարաններու Սանուց Միութիւն մը եւ ընտրուեցաւ անդրանիկ վարչութիւն մը եւ որը հոգիներէ բաղկացեալ, որ պիտի պատրաստէ ներքին կանոնագրութիւն մը եւ կազմակերպէ պաշտօնական առաջին համագումարը: Նոյնպէս միաձայնութեամբ եւ ջերմ օսութեան մէջ Սանուց Միութեան Պատուոյ Նախագահ ընտրուեցաւ Տիար Ա. Մանուկեան:

Վերջին օրը տեղի ունեցաւ խրատեցանքի հաւաքոյթ, Տրքոյի Ս. Յովհաննէս Մկրտիչ Էկեղեցւոյ շքեղ հանգիստարանին մէջ ի ներկայութեան ցկեանս Նախագահ Տէր եւ Տիկ. Ալէք Մանուկեանի:

Տեղւոյն վրայ ինքնաբոխ կերպով նուէրներ եղան նորակազմ Միութեան ի նպաստ եւ կարն ժամանակէն 3000 տոլար գոյաց սև:

Յառաջիկային լայնօրէն պիտի անդրադանանք սոյն բացառիկ հաւաքին մասին:

ԵՐԳ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

Եկար արդեն..., ու քեզի հետ ձիւն ու սարսուռ բերի կրկին...,
Ձիւներուն հետ բերի կրակ՝ մեր լոյսերուն համար անձիր...
Մեր յուշերուն խարոյ՛լը լուսո՛ւ՝ արծարծեցիր դուն վերստին
Ապագայի լոյսերն անբիւ ներկային մեջ շողացուցիր:

Ամեն սիրտի վերէւ առկախ եղար զանգալ քաղցրամորան,
Ու տանիքի վրայ ամեն՝ բարուն մրմունջ ու ոտնածայն...
Կարիքներու ծովերուն մեջ ծփծփացիր զերդ նոր կղզի,
Կարծար ծաղիկ լուս ամպիտ երկինքին մեջ մուր ու մեծղի:

Լայն քե նեղիկ, մուր քե լուսեղ բոլոր, բոլոր ուղիներէն՝
Հասառարիմ եւ աննահանջ զերդ բարեկամ եկար նորէն...
Ձեռքդ բարի եր՛արեցիր ամեն սիրտէ ու տունէ ներս,
Ամեն աջբի՛ մամ ու երանց, ամեն խճի բ՛րիր բեհեզ:

Իշար մարդոյ խոնջ ու տուր ճոգիներուն վրայ մուր՝
Որպէ՛ս ներիար ու փ վերաբիւն. որպէս սիրոյ անուշ օրօր...
Պարուրեցիր վերք ու կարօտ՝ քու խոստումիլ սակերելով,
Տուիր անզորը ու մուսացում՝ բիւր կուրծի՛ քու ալկառո՛ւ...:

Եկուր, եկուր, ո՛վ Նոր Տարի, ու զայուստիկ ձիւներուն հետ
Բեր մարբութիւն, բերչանք ու բոյր՝ մեր կարծրացող ճոգիներուն...
Տենդոտ ու կուղպ մեր տ՛նջերուն խաղաղութիւն բեր կ՛նսաւես
Նղրայութիւն բեր նշմարիտ, նշմարիտ սեր ու բարութիւն:

Բախե դռները մեր բոլոր քու մատներով անկողմնակալ...
Բեր պատիժի սուրբ հատու, վարձատրութեան կշիռն արդար,
Տուր խորք ու փայլ մեր խինդերուն, մեղմէ ամեն ցաւ ու կարիք,
Նղիր մաղթանք՝ մեր շրթներուն, մեր ափին մեջ՝ եղիր բարիք,

Եկուր, եկուր որպէս զրան եւ ա՛րութիւն, ո՛վ Նոր Տարի,
Ու պաշտպանէ մեզ մեզի դեմ, մեզ՝ մեզի դեմ ըրէ արի...
Մեր սիրտերուն մեջ ծուարած՝ բաց ամբարներն արեւայի,
Ու պարզէ մեզ, բացատրէ մեզ, նորոգէ մեզ, ո՛վ Նոր Տարի...:

ԶԱՐԵՀ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ Դ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Անցեալ Յուլիս 1, 2, 3, Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի օրերուն Փարիզի մէջ գումարուեցաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Դ. Համաշխարհային Պատգամաւորական Խորհրդակցական ժողովը, տեսնապետութեամբ Միութեան ցկեանս Նախագահ Տիար Ալեք Մանուկեանի:

Սփիւռք-Հայրենիք կապերու սերտացման դժով, յատկանշական իրողութիւն մըն էր Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի Նախագահ Տիար Վարդգէս Համազասպեանի ներկայութիւնը Համաժողովին եւ իր ունեցած կուռ ելոյթը:

Անդրադառնալով Համաժողովի աշխատանքներուն հարկ է առաջին հերթին նշել, թէ անոնք տեղի ունեցան իրարհասկացութեան եւ համագործակցութեան նախանձելի մթնոլորտի մը մէջ եւ եզանքնականաբար արգիւնաւէտ:

Համաժողովի գումարման թուականէն օրեր առաջ զանազան երկիրներէ պատգամաւորներ եւ հիւրեր արգէն սկսած էին ժամանել Փարիզ: Սակայն, Հինգշաբթի 31 Մայիսին էր որ հասաւ պատգամաւորներու մեծամասնութիւնը:

* *

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7ին, քոքթէյլ մը սարքուեցաւ Էնթէրքոնթինանթալ պանթոկի սրահներուն մէջ, առաջին հանդիպումի առիթ մը ստեղծելու համար արգէն իսկ Փարիզ ժամանած պատգամաւորներուն եւ փարիզահայ գաղութի կարգ մը անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ Կազմակերպիչ Յանձնախումբի անդամներուն միջև:

* *

ԱՌԱՅԻՆ ՆԻՍՏ

Հ. Բ. Ը. Միութեան Դ. Համաշխարհային Պատգամաւորական Խորհրդակցական ժողովի անդրանիկ նիստը տեղի ունեցաւ

Փարիզի Շ. Լ. Մ. Սէն Ժագ պանդոկին կողմէ յստկապէս տրամադրուած «ԱԿԱԹ» սրահին մէջ, Ուրբաթ 1 սենիս 1973-ին, մասնակցութեամբ տասնեւմէկ երկիրներէ եկած 52 Պատգամաւորներու եւ Կեդր. Վարչական ժողովի անդամներու: Ներկայ կան նաեւ Ֆրանսահայ Երեք Յարանուանութեանց Պետերը ինչպէս նաեւ Ֆրանսայէն թէ աբտասահմանէն յիտունէ աւելի ունկնդիր հիւրեր:

Առաւօտեան ժամը ճիշդ 10ին բացուեցաւ համաժողովին Ա. նիստը Էւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ Բարձր. Սերովբէ Արք. Մանուկեանի ազօթքով:

Նախ խօսք առաւ Միութեան Կեդր. նական Վարչական ժողովի անդամ ու Ֆրանսայի Շրջ. Յանձնաժողովի Ատենապետ Պր. Նուրհան Ֆոէնկեան ու պատգամաւորներուն բարի գալուստ իսկ ժողովի աշխատանքներուն ալ յաջողութիւն մաղթելէ ետք, հրաւիրեց Նախագահ Ալեք մանուկեանը որ ստանձնէ ժողովին Ատենապետի իր պաշտօնը:

Նախագահ Ալեք Մանուկեանի առաջարկով, մէկ վայրկեան յտնկայս լռութեամբ յարգանք մատուցուեցաւ նախորդ Պատգամաւորական Համաժողովէն ի վեր մեզմէ առ յաւէտ բաժնուած բարերարներու, յուրատուններու եւ անդամներու յիշատակին:

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Նշանակուով Ատենաղապրի. — Ժողովին Ատենաղապրի նշանակուեցաւ Պր. Սարգիս Մինասեան որ իսկոյն ստանձնեց իր պաշտօնը:

Բ. Նշանակուով Բանաձեռներու Յանձնախումբի. — Բանաձեռներու Յանձնախումբի անդամ նշանակուեցան Փրոֆ. Բերկրուհի Սվաճեան, Պրնք. Հայկազէն Ուզունեան, Գրիգոր Համբարձումեան, Տօքթ. Տիգրան Ալեքսան-

եան, Մեթր Նուպար Թուրսարգիսեան:

4. - Ծանօթացում Պատգամաւորներու. — Կարգաւ իւրաքանչիւր պատգամաւոր ներկայացուց ինքզինքը ու թուեց Հ. Բ. Լ. Միութեան ներս իր վարած պաշտօնները:

ԲԱՅՄԱՆ ՃԱՌ

Նախագահ Ալեք Մանուկեան նախորդ Համաժողովի խորհրդակցութեանց և թելադրութեանց շրջածիրին մէջ՝ Միութեան վերջին չորս տարիներու գործունէութիւնը բնութագրող բովանդակուից ճառ մը արտասանեց: Յարգելի նախագահը շեշտեց կրթական գործին ստացած մեծ ծաւալը, հայագիտութեան մէջ մասնագիտանալ փափաքող ուսանողներու եղած շօշափելի օժանդակութիւնը, երիտասարդական շարժումներու քաջակերութիւնը ու մանաւանդ մշակութային-մարզական կեդրոններու հաստատման գծով արձանագրուած փառահեղ նուաճումները:

Ապա նախագահ Մանուկեան հրաւիրեց Փարիզի Առաջնորդ Բարձր. Սերովբէ Արք. Մանուկեանը իր խօսքը ուղղելու ներկայ պատգամաւորներուն և հ'երերուն:

Սրբազան Հայրը որ դեռ նոր վերադարձած էր Ս. Էջմիածին կատարած իր այցելութենէն, նախ և առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վարդէն Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութիւններն ու սղոյնները փոխանցեց ներկաներուն: Վեհափառ Հայրապետը տեղեակ ըլլալով Հ.Բ.Լ. Միութեան Պատգամաւորական ժողովի գումարումէն, մասնաւորաբար պատուիրած էր Սրբազան Հօր Իր անունով յաջողութեան մաղթանքներ ներկայացնել պատգամաւորներուն:

Յաջորդ խօսք առնողը եղաւ Ֆրանսայի Հայ Եքսարքութեան Առաքելական Եպարքոսի Գեորգ Հ. Նիկողոս Ծ Թ վրդ. Գեհեայեան: Խօսք առնելու հրաւիրուեցաւ նաեւ Ֆրանսայի Հայ Բողոքական համայնքի Հոգեւոր Հովիւ Վերապատուելի Գարեգին Սիւլեան:

Երեք Յարանուանութեանց Պետերու ուղերձներէն ետք, հակիրճ ելոյթներ ունեցան նաեւ Հ.Բ.Լ. Միութեան Զուլիցերիա-

կան Իրաւավիճակով Ընկերակցութեան Վարիչ Պատուիրակ Պր. Արա Չամբէրթէն, Ամերիկայի Կեդրոնական Յանձնաժողովի Նախագահ Պր. Եգուարդ Մարտիկեան, Կեդր. Վարչական Ժողովի Վոյս-Նախագահ Տք. Վարդգէս Մկրտիչեան, Կեդրոնական Վարչ. Ժողովի անդամներէն Պրնք. Կուլա Գարտաշեան, Յակոբ Տէրտէրեան և Սուրէն Ֆէսճեան: Բոլորն ալ ընդգծեցին հայ իրականութեան մէջ Բարեգործականին վիճակուած բախտորոշ դերը ու փափաք յայտնեցին որ յարաճուն թափով շարունակելի անոր օգտաշատ գործունէութիւնը ի փառս հայ ժողովուրդին ինչպէս նաեւ խօսք առաւ Պատուելի Յարութիւն Հէյվաճեան, Մարտէյլէն, որ հիւրաբար ներկայ էր ժողովին:

Ուղերձներու կարգին, կարգացուեցաւ Գերշ. Տ. Զաւէն Եպս. Չինչինեանի նամակը որով Ազգքսանդրիոյ Ազգ. Իշխանութեան անունով յաջողութիւն կը մաղթէր համաժողովի աշխատանքներուն:

Հ.Բ.Լ. Միութեան Գ. Համաշխարհային Պատգամաւորական Խորհրդակցական Ժողովի Ա. Նիստը փակուեցաւ ժամը 12.30ին:

Կէսօրին՝ Փ. Լ. Մ. Սէն Ժագ պանդոկի ճաշարանին մէջ տեղի ունեցաւ խմբական ճաշ: Բոլոր ներկաները՝ պատգամաւոր թէ ազատ ունկնդիր հիւրը եղան նախագահ Ալեք Մանուկեանի:

ԵՐԿՐՈՐԳ ՆԻՍ

Համաժողովի Բ. Նիստը բացուեցաւ յետմիջօրէի ժամը 2.15-ին: Այս նիստին ներկայ եղաւ նաեւ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի Նախագահ Պր. Վարդգէս Համազասպեան որ յատկապէս եկած էր մասնակցելու Հ.Բ.Լ. Միութեան Գ. Համաշխարհային Պատգամաւորական Խորհրդակցական Ժողովի աշխատանքներուն:

Հ.Բ.Լ. Միութեան Զուլիցերիական Իրաւավիճակով Ընկերակցութեան Վարիչ Մարմնի Պատուակալ Վարիչ Պատուիրակ Պր.՝ Ապա Չամբէրթէն հանգամանօրէն անդրադարձաւ Միութեան Զուլիցերիական

Ընկերակցութեան վերակազմութեան և ա- նոր վստահուած կարեւոր առաքելութեան:

Հ.Բ.Ը. Միութեան Ամերիկայի Կեդրո- նական Յանձնաժողովի Նախագահ Պր. Եդ- ւարդ Մարտիկեան տեղեկութիւններ տուաւ Միացեալ Նահանգներու և Գանա- տայի Շրջանակին գործունէութեան մա- սին:

Լիրանանի Շրջանակային Յանձնաժո- ղովին տեղեկագիրք ներառացուց Մեթր Նուպար Թուրսարգիսեան:

Մասնաւոր ուշադրութեան արժանա- ցաւ Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժո- ղովի Փոխ-Ատենապետ Պր. Գրիգոր Համ- բարձումեանի ղեկոյցը:

Եգիպտոսի Կեդրոնական Յանձնա- ժողովին անուսով ղեկուցեց Պր. Վահան Ալեքսանեան: Եգիպտոսայ երբեմնի բար- դաւաճ գաղութին աստիճանական նօսրա- ցումով և տեղական պայմաններու բեր- մամբ Եգիպտոսի Կեդրոնական Յանձնա- ժողովին գործունէութիւնը պարտազբաբար եղած էր սահմանափակ: Բայց և այնպէս, ըսաւ Պր. Ալեքսանեան, Գահիրէի և Աղեք- սանգրիոյ մասնաճիւղերը մշակութային գեանի վրայ ունին բաւական բեղուն գոր- ծունէութիւն: Յովակիմեան կալուածի հա- սոյթներէն կրթաթոշակ կը յատկացուի երկ- րորդական ուսման հետեւող որոշ թիւով ուսանողներու: Քաջակրեւու համար գա- ղութին երիտասարդական շարժումները և ստատրեւու համար անոնց մարզական ա- սողջ դաստիարակութեան, Միութեան պատկանող երկու մարզադաշտեր — մին Հելիոպոլսոյ և միւսը Աղեքսանդրիոյ մէջ — Հ.Մ.Ը.Մ. Նուպար Ընկերութեանց արա- մազրութեան տակ գրուած են:

Հ.Բ.Ը. Միութեան Սան Կալոյի (Պրա- գիլիա) մասնաճիւղին կողմէ Պր. Տիրան Մոստրիչեան յայտնեց, թէ շնորհիւ իր ազ- գանուէր գործունէութեան՝ Բարեգործա- կանը պատուաբեր տեղ մը կը գրաւէ գա- ղութին ազգային կեանքին մէջ:

Ատիս Ապապայի Մասնաճիւղին տեղե- կագիրք Պր. Մարտիրոս Տարազճեանի փո- խարէն կարգաց Ընդհ. Տնօրէն Պ. Մ. Հայ- կենց:

Լոնտոնի Մասնաժողովի ատենապետ

Պր. Թագլոր Պարծանքեան իր ղեկուցումին մէջ յայտնեց թէ վերջերս նոր թափ առած էր Բարեգործականի գործունէութիւնը Լոնտոնի մէջ՝ ուր զգալիօրէն աւելցած էր հայկական գաղութի անդամնէ: Ուն թիւը:

Միլանոյէն՝ Տօքթ. Տիգրան Ալեքսան- եան հոգիրճ կերպ վ անգրագարձաւ տե- ղական Մասնաճիւղի գործունէութեան:

Հ.Բ.Ը. Միութեան Գ. Համաշխարհա- յին Պատգամաւորական Խորհրդակցական ժողովի Բ. նիստին կուռ ելոյթ մը ունե- ցաւ Սփիւռքահայութեան հետ Մշակութա- յին Կապի Կոմիտէի Նախագահ Պր. Վարդ- գէս Համազասպեան:

Պր. Համազասպեան վերջին չորս տա- րիները բնութագրեց որպէս Բարեգործա- կանի ամէնէն բեկմաւոր գործունէութեան ժամանակաշրջանը, որուն ընթացքին լայն ծաւալ ստացած էին դպրոցական ցանցի ստեղծման գործունէութիւնը, մշակութա- յին կեդրոններու և սրահներու կառուցու- մը, գեղարուեստական խումբերու կազմա- կերպումը, երիտասարդական շարժման խթանումը, նոր ֆոնտերու ստեղծումը և բազմաթիւ այլ ձեռնարկներ:

Պէտք է ընդգծել, ըսաւ Պր. Համա- ղասպեան, որ Հ.Բ.Ը. Միութեան անցնող տարիներու ամենամեծ նուաճումը այն վստահութիւնն է որ ան շահեր է իր ազ- գանուէր գործունէութեան շնորհիւ:

ԵՐՐՈՐԳ ԻՒՍՏ

Հ.Բ.Ը. Միութեան Գ. Համաշխարհա- յին Պատգամաւորական Խորհրդակցական ժողովի Գ. նիստը տեղի ունեցաւ Շարաթ, 2 Յունիս 1973, առաւօտան ժամը 9.30ին, ասինապիտութեամբ Միութեան ցկեանս Նախագահ Պր. Ալեք Մանուկեանի:

Ընդհ. Տնօրէն Պր. Մ. Հայկենց թուա- նշաններու թուումով լայնօրէն անդրադար- ձաւ Միութեան նիւթական և բարոյական այժմու գործունէութեան մասին:

Հ.Բ.Ը. Միութեան կրթական գործին մասին, խնամալ ղեկոյց մը կարգաց Կեդրոնական Յանձնախումբի Նախագահ Փրոֆ Բերկրուհի Սվաճեան:

Վերջին քսան տարիներուն, ըսաւ յարգելի Փրոֆէսօրը, Բարեգործականի

գործունէութեան կորիզը դարձած է կրթական աշխատանքը որ կ'ընդգրկէ չորս սեփական երկրորդական վարժարաններ, 13 սեփական նախակրթարան և մանկապարտեզ, Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկ, 68 նպաստընկալ զպրոցներ, հայերէն լեզուի դասընթացքներ, այս բոլորը տարածուած 15 երկիրներու վրայ: Միջին Արեւելքի, Եւրոպայի, Հիւսիսային և հարաւային Ամերիկայի, Գանատայի և Աւստրալիոյ մէջ:

Այս բոլոր տեսակի կրթական յատկացումներուն գումարը կը բարձրանայ տարեկան 1.250.000 տոլարի:

Հ.Բ.Ը. Միութեան երիտասարդական շարժումներուն մասին տպաւորիչ ելոյթներունեցան Տիկ. Արմենին Սապահ-Փիւլեան:

Լիրանանի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան կողմէ Պր. Ննովք Պալիկեան և Ֆրանսահայ երիտասարդութեան կողմէ, Հ.Բ.Ը. Միութեան Փարիզի Երիտասարդաց Ակումբի Ատենապետ Պր. Արման Նշանեան:

Ընդհանուր խանդավառութեան մէջ խօսք առաւ Պր. Երուանդ Հիւսիսեան:

Ան յայտարարեց թէ 125,000 տոլար կը նուիրէր Հ.Բ.Ը. Միութեան, որպէսզի իր անունով հիմնադրամ մը հաստատուի և այդ հիմնադրամին եկամուտով կարելի ըլլայ հոգալ Պէյրութի «Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկ»-ին ծախքերը:

Համաժողովի Գ. նիստը փակուեցաւ ժամը 12-ին:

* *

Կէսօրին՝ բոլոր ներկաները միատեղ ճաշեցին Փ.Լ.Մ. Աէն ժազ պանդոկի ճաշասրահին մէջ, հիւրասիրութեամբ Ֆրանսայի Յանձնաժողովի Ատենապետ Պր. Նուրհան Ֆոէնկեանի:

ԶՈՐՐՈՐԳ ՆԻՍՏ

Համաժողովի Գ. նիստը բացուեցաւ յետմիջօրէի ժամը 2.30ին:

Մարտէյլի Մասնաժողովէն Պր. Արամ Շէխիկեան և Վալանսի Մասնաժողովէն Պր. Մարտիրոս Մարտիկեան զեկուցումներ կարդացին իրենց Մասնաճիւղերու գործունէութեան մասին:

Տիկնանց Օժանգակ Մարմիններու գործունէութեանց շուրջ արտայայտուեցան Լոնտոնէն Տիկին Անահիտ Պարծանքեան, Մարտէյլէն Տիկ. Էլիզ Զրբաշեան և Վալանսէն Տիկ. Լուսարփի Թօսճեան:

Տեղի ունեցաւ կարծիքներու լայն փոխանակութիւն գլխաւորաբար կրթական հարցերու, երիտասարդական շարժումներու և նոր մշակութային կեդրոններ հաստատելու կապակցութեամբ:

Նախագահ Ալեք Մանուկեան մեծ ձեռնասութեամբ վարեց վիճարանութիւնները և մանրամասն բացատրութիւններ տուաւ բոլոր հարցերուն մասին:

Լսելէ հետք բոլոր արտայայտուած կարծիքներն ու թելադրութիւնները, բանաձեւերու Յանձնախումբի անդամները պահ մը առանձնանալով խմբազրեցին եզրակացուցիչ բանաձեւերը, սրանք յետընթացման նոյնութեամբ վաւերացուեցան ներկայ պատգամաւորներուն կողմէ:

Օրակարգի հարցերը սպառած ըլլալով, Հ.Բ.Ը. Միութեան Գ. ամաշխարհային Պատգամաւորական Խորհրդակցական Ժողովը փակուեցաւ նախագահ Ալեք Մանուկեանի շնորհակալական խօսքերով, յետմիջօրէի ժամը 5.30ին:

* *

Ուրբաթ 1 Յունիս 1973 կ. ե. ժամը 6ին, շուրջ 50 պատգամաւորներ և հիւրեր մասնաւոր օթոքարով մը առաջնորդուեցան քաղաքապետարան:

Պատուիրակութիւնը ընդունեց Թաղապետական Խորհուրդի փոխ-նախագահ Տիկ. Կարնիէ Լանկոն: Ան բարի դալուստի ջերմ խօսքերէ հետք, հայանպատաս գեղեցիկ ճառ մը կարգաց որ հպարտութեամբ լեցուց բոլոր ներկաներուն սրտերը:

Ներկաներուն կողմէ, Հ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պր. Նուրհան Ֆոէնկեան շնորհակալութիւն յայտնեց Տիկ. Կարնիէ Լանկոնին, հայերու հանդէպ տածած իր այնքան ազնիւ զգացումներուն համար և Ֆրանսերէն լեզուով իմաստալից ճառ մը արտասանեց:

* *

Երաժշտական վայելուչ փառատօն մը

տեղի ունեցաւ Ուրբաթ, 1 Յունիս 1973
կ. ե. ժամը 8.30ին:

Այս առթիւ սարքուած նուագահան-
դէսը, նուիրուած էր հայ երաժշտութեան
բազմավաստակ մշակներէն զաշնակահար-
երգահան Ա. Բաբաջանեանի ստեղծագոր-
ծութիւններուն, որուն անձամբ մասնակե-
ցեցաւ նաեւ արուեստագէտը:

Այս փառատօնին իրենց մասնակցու-
թիւնը բերին մեծահամբաւ զաշնակահար
Բաֆֆի Պետրոսեանը, ջութակահարուհի
Աննի Փալաֆեանը, զաշնակարահուհիներ՝
Անի Ղազարեանը և Այսա Պատմաճեանը:

Սպա սկսաւ զեղարուեստական յայ-
տագրի գործադրութիւնը, որուն իրենց
մասնակցութիւնը բերին, Լոնտօնէն՝ Երի-
տասարգ երգչուհի էլիզ Պոյաճեանը, «Սա-
յաթ Նովա» նուագախումբը, սիրուած
երգչուհի Աստղիկ Տէաէեանը, Տիկ. Յաս-
միկ Քիւթնէրեանի հիմնած ու ղեկավարած
«Սօսի» պարախումբը, երգչուհի և եր-
գահան Սիրվարդ Գաղանճեանը:

Գեղարուեստական բաժնին յաջորդեց
«Արմենիլըն Սանշայն» խանդավառ նուա-
գախումբը, որուն ընթացքին իրենց երգե-
րով մեծ խանդավառութիւն ստեղծեցին



Բարձ. Արք Ս. Մանուկեան, Պր. Ն. Ֆո.Լեկեան և Վեր. Գ. Սիսեան:

Զախեհ աջ - Ն. Ծ. Թ. Վրդ. Քեհեայեան, Պր. Մ. Հայկեց, Նախագահ Այեք Մանուկեան

Ա. Բաբաջանեանի գործերէն բաղկաց-
եալ ընտիր յայտագիր մըն էր որ ներկա-
յացուեցաւ հանդիսականներուն: Մեծ եղաւ
արուեստագէտներուն հրամցուցած ելույթ-
ներուն յաջողութիւնը, որ անտարակոյս
ոգեւորած էր նաեւ իրենց ալ զգացումները:

Շաբաթ, 2 Յունիսի երեկոյեան, կազ-
մակերպուած էր մեծ ճաշկերոյթ մը, ո-
րուն յաջորդեց խրախճանքն ու պարահան-
դէսը:

Գիշերուան ժամը 11ին, ընդհանուր
խանդավառութեան մէջ, Նախագահ Ա.Էք
Մանուկեան խօսք անելով իր գոհունակու-
թիւնը յայտնեց որ միութեան Գ. Համաշ-
խարհային ժողովը արգիւնաւէտ կերպով
աւարտած էր իր աշխատանքները: Յար-
գելի Եղուանդ Հիւսիսեանի 125.000 տուա-
րի նոր նուիրատուութիւնը և յայտնեց թէ
Տիար Հիւսիսեան Պատուոյ Նախագահ
հռչակուած է Միութեան Զուիցերիական
Իրաւիճակով Ընկերակցութեան:

Յրետերիք Մարթէն Եորկանճեանը և Լվլին
Ալթունեանը:

Այս փառաւոր ճաշկերոյթ-Պարահան-
դէսը տեւեց մինչեւ արշալոյս:

Կիրակի, 3 Յունիս 1973, առաւօտ-
եան ժամը 10ին, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ
մայր եկեղեցին ամբողջութեամբ լեցուած
էր Հ.Բ.Ը. Միութեան ղեկավարներով, ան-
դամներով, համակիրներով և հաւատացեալ
բազմութեամբ:

Հանդիսաւոր Ս. պատարագին ներկայ
եղան Տիկ. Առաքել Փաշա Նուպար-Միութեան
հիմնադիր Պօղոս Փաշա Նուպարի
Անդրանիկ որդւոյն այրին, ինչպէս նաեւ
Հ.Բ.Ը. Միութեան Գ. Համաշխարհային
Պատգամաւորական Խորհրդակցական ժո-
ղովին մասնակցող պատգամաւորներն ու
հիւրերը:

Բովանդակալից քարոզ մը խօսեցաւ
Բարձ. Սերովբէ Արք. Մանուկեան: Յաւարտ
Ս. Պատարագի՝ տեղի ունեցաւ հոգեհանգստ-

ՊՐ. Ա. Ա. ՍԱՐՈՒԽԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Ինչպես գիտենք «Տեղեկատու» Պարբերաբերքի արտոնատեր, անուանի երգիծանկարիչ և ազգային գործիչ՝ Պր. Ա. Ա. Սարուխան շրջապտոյտ մը կատարեց դեպի Գանատայի և Ամերիկայի գաղթօճախները: Ան մեկնեցաւ 21 Օգոստոս 1973ին, դեպի Մոնթրէալ, ներկայ գտնուելու համար միջազգային 10րդ երգիծանկարչական ցուցահան-

եան պաշտօն միութեան հիմնադիր Պօղոս Փաշա Նուպարի Նուպար գերգաստանի և միութեան համայն ողբացեալ բարերարներու: Նուիրատուներու, կտակարարներու, գործիչներու և անդամներու յիշատակին:

Ապա պատգամաւորներն ու բազմաթիւ հիւրեր մասնաւոր ինքնաշարժներով ուղղուեցան Փէր-Լաշէլի գերեզմանատունը: Այս առթիւ սրտառուջ ուղերձ մը խօսեցաւ Ընդհ. Տնօրէն Պր. Միսաք Հայկենց:

* *

Յիշատակելի երեկոյթով մը վերջացնելու համար համաժողովին յարակից ձեռնարկներուն եօթեայ յայտագիրը, Տէր և Տիկ. Նուրհան Փռնիկեան հոյ և Ֆրանսական բարեկամութեան ձօնուած մեծ ընդունելութիւն մը սարքած էին իրենց Պուրսոյի գղեակին մէջ, Կիրակի, 3 Յունիս 1973ի երեկոյեան ի պատիւ Հ. Բ. Լ. Միութեան Դ. Համաշխարհային պատգամաւորական խորհրդակցական Ժողովին մասնակցող բոլոր պատգամաւորներուն:

* *

Հ. Բ. Լ. Միութեան նման ընդարձակ ու համատարած գործունէութիւն ունեցող կեանքին մէջ, հանդիպումի սքանչելի առիթներ են չորս տարին անգամ մը գումարուող այս համաժողովները, որոնց ընթացքին կը մշակուին ազգօգուտ նոր ծրագիրներ, դէպի աւելի բարգաւաճ նոր շրջաններ ուղղուելու համար:

Ամփոփուած՝ «ՇԻՆԱՐԱՐ»էՆ

դեսին, ուր ցուցադրուեցան իր 20է աւելի նկարները:

Իր վերադարձի նամբօն վրայ, ան այցելեց նաեւ Փարիզ և կազմակերպութեամբ Հ. Բ. Լ. Միութեան ու հովանաւորութեամբ Պր. Ն. Փռնիկեանի, ցուցահանդէս մը տուաւ Ֆրանսահայ գաղութին, ուրկէ վերադարձաւ եգիպտոս Հինգշաբթի, 8 Նոյեմբերին:

Այս առթիւ ի պատիւ իրեն մասնաւոր ընդունելութիւններ սարքուեցան, ցուցահանդէսի վարչութեան, ձայնասփիւռի, հեռատեսիլի, Աստրական հիւպատոսարանին, ինչպէս նաեւ հայկական ակումբներու կողմէ:

Պր. Ա. Սարուխան անանկայ այցելութիւն մը տուաւ նաեւ Տրքոյի հայ գաղութին:

Արդարեւ, Հինգշաբթի, 13 Սեպտեմբերին ընտրանի բազմութիւն մը լեցուցած էր հայ վեթերաններու սրահը, ուր նախ կատարուեցաւ նաշի սպասարկութիւնը: Սրահին մէկ անկիւնը ցուցադրուած էին շուրջ 25 երգիծանկարներ Սարուխանի ստեղծագործութիւններէն:

Համեղ նաշի սպասարկութենէն ետք, գործադրուեցաւ հանելի յայտագիր մը: Օրուան հանգիսավարն էր Պր. Նրուանդ Ազատեան, որ իբրեւ երբեմնի խմբագիրը Գահիրէի «Արեւ» օրաթերթին, երկար տարիներ մօտէն գործակցած էր Պր. Սարուխանին ու գրած անոր զիբրերու մեծամասնութեան նախաբանները:

Հ. Բ. Լ. Միութեան մեծանուն նախագան և հայ արուեստներու անգուցական պաշտպան Տիար Ալէք Մանուկեան ոչ միայն միեւնոյն օրուան կեսօրին նաշով մը պատուած էր հիւր արուեստագետը՝ այլ յանձն առած էր ներկայ գտնուելու նաեւ երեկոյեան սոյն հանդիսութեան և կատարելու օրուան բանախօսի պաշտօնը: (Տիար Ա. Մանուկեանի ամբողջական ու բովանդակալից խօսքը կուտանք յաջորդ հոլով):

Նախագահ Մանուկեանի խօսքէն ետք բեմ հրահարուեցաւ արուեստագետ Սարուխան, որ գուարքախոնութեամբ լի իր ելոյթով լարուած պահեց հանդիսականներուն ուշադրութիւնը:

Ապա ճիացո՞մով արտայայտուեցաւ Տիար Ալէք Մանուկեանի բարերարութեանց եւ ազգային իմաստուն ղեկավարութեան մասին:

Սիոն Արք. Մանուկեան, որ շրջան մը եզիպտոս գտնուելով նանջցած էր Սարուխան արուեստագետը եւ անոր վայելած համակրանքը եզիպտահայ գաղութին մէջ, գնահատանքով արտայայտուեցաւ անոր գործունէութեան մասին:

Յայտագիրէն ետք՝ ներկաները երկարատեւ լսեցան Սարուխանի ստեղծագործութեանց շուրջ եւ զրուցեցին արուեստագետին հետ:

ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԽՕՍՔԸ Ա.Լ. ՍԱՐՈՒԽԱՆԻ Ի ՊԵՏԻՒ ՏՐՈՒԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Մասնաւոր հաճոյք է մեզի համար Տիթրոյթի մէջ ողջունել անուանի երգիծանկարիչ և ազգային գործիչ Ալեքսանդր Սարուխանը:

Թէեւ ինք քիչ մը ուշ մնաց այցելելու Ամերիկա, սակայն իր համբաւը իրմէ առաջ հասած էր մեզի և մենք հայ մամուլի մէջ երկարատեւ վայելած էինք իր հիւթալի երգիծանքին արտագրութիւնները:

Մինչեւ Սարուխանի ստեղծագործական կեանքի ձեռնարկիլը՝ երգիծանկարչութիւնը իր լիբրաւ տիրող շունէր մեր արուեստներու կեանքին մէջ. անոր երեւումով և մանաւանդ տիրական ստեղծագործութիւններով է որ երգիծանկարչութիւնը դարձաւ առանձին արուեստ մը: Եւ ան ո՛չ միայն ստեղծեց իր ազգային տիպարները, այլ իր տաղանդով ամբողջացուց մեր երգիծանքի վարպետներուն գործերը. արդարեւ, Յակոբ Պարոնեանի և Երուանդ Օտեանի երգիծական գլուխ-գործոցներուն նկարագարգումը Սարուխանի կողմէ՝ եզակի երեւոյթ մը պիտի մնայ հայ ստեղծագործական միտքի պատմութեան մէջ:

Երբ Սարուխան երգիծանկարչութիւնը բարձրացուց արուեստի մակարդակին՝ Միջին Արեւելքի մէջ եւս այդ արուեստը տակաւին չէր ունեցած իր տիրական Վար-

պետը: Եւ քանի որ Սարուխան դուրս գալով հայկական իրականութենէն իր ստեղծագործութիւնները կը հրատարակէր արաբական մամուլի մէջ՝ ան ճանչցուեցաւ իրրեւ հայրը Միջին Արեւելքի արաբական երգիծանկարչութեան: Այսօր Միջին Արեւելքի մէջ մեծ անուն մըն է ան, և ամբողջ սեփական մը կը հետեւի իր արուեստի սեղիին:

Սարուխանի տաղանդը միշտ փնտռուած է որքան հայ իրականութեան մէջ նոյնքան նաեւ արաբական մամուլի մէջ. այդ պատճառաւ ալ ան յարգուած ու սիրուած անուանի երգիծանկարիչը եղած է եզրպատասի արարատա թէ Ֆրանսատա մեծ թերթի բուն: Վերջին շտաբիներուն Միջին Արեւելքի ամէնէն մեծ թերթերէն մէկուն՝ «Ալ Ախպար»-ի մնայուն երգիծանկարիչը եղած է ան և այդ միջոցաւ ալ իր գործերը, քաղաքական երգիծանկարները արատապուած են Ֆրանսայի, Անգլիոյ թէ մարիկայի մամուլին կողմէ՝ իրրեւ նմոյշ արաբական աշխարհի քաղաքական մտածողութեան: Ի դուր չէ որ Նախագահ Քենըտի զինք պարզեւտարած է «Փողովուրդներու միջեւ բարեկամութիւն և հասկացողութիւն» սերմանող իր արուեստին համար:

Այս բոլոր յաջողութիւնները մեծամիտ, ինքնամոփոփ կրնային դարձնել Սարուխանը ինչպէս կը պատահի յաճախ, երբ մեր հայ արուեստագետները հասնին միջազգային ճանաչումի և համբաւի: Սակայն, Սարուխանի պարագային պատահած է հակառակը՝ ան աւելի՛ ու աւելի՛ ծաւալած է իր գործունէութիւնը հայ մամուլի և զեղարուեստական կեանքի մէջ և իր համբաւը օգտագործած է՝ օտարներու մօտ ծանօթացնելու հայուն ստեղծագործ տաղանդը և առաքինութիւնները:

Յատկանշական ուրիշ երեւոյթ մըն ալ կայ Սարուխանի անձին մէջ՝ մինչ արուեստագետները ընդհանրապէս հնուր կը մնան ազգային, ընկերային և կազմակերպական կեանքէ՝ մեր այսօրուան հիւր արուեստագետը եղած է ազգային սիրուած ղեկավար մը եզրպատահայ գաղութին մէջ. ան գրած, բանախօսած ու նկարած է ազ-

գային իրականությունները՝ ըստ իր խորունկ համոզումներուն և իր նպատար բերած է եզրագտահայ թէ սփիւռքահայ գաղափարներուն խմորումին:

Եզրագտոս, ըլլալով Բարեգործականի հիմնադրութեան օրրանը՝ Սարուխան իբրեւ ազգասէր անձնաւորութիւն մը չէր կրնար հեռու մնալ Միութեան գործունէութենէն. և ան, իրեն յատուկ եռանդով, ծառայած է Հ.Բ.Ը. Միութեան, որուն եզրագտոսի Վարչութեան պաշտօնաթերթ «Տեղեկատու»-ի արտօնատէրն է մինչեւ այսօր:

Ան անցեալին իր գործօն մասնակցութիւնը բերած է ազգահաւաքի նուիրական գործին՝ իբրեւ ատենապետը եզրագտոսի ներգաղթի կոմիտէին: Լ.ննցած է ազգային, հասարակական ու մշակութային գործունէութիւն՝ հանդիսանալով ղեկավարներէն մէկը Ռամկավար Ազատական Կուսակցութեան, ու վարելով ատենապետութիւնը Գահիրէի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան, Կոկանեան Սրահի և Հայ Մշակոյթի Բարեկամներու Միութեան:

Սարուխանին և ընդհանրապէս Սփիւռքահայերու համար՝ մասնաւոր հպարտութիւն է որ Մայր Հայրենիքը եւս ճանչցած ու գնահատած է անոր տաղանդը և երկու անգամ զինք հրաւիրած է այցելելու Երեւան, ուր այնքան ջերմեռանդ հիացողներ կան իր երգիծանկարներուն:

Հայաստանի մէջ թելիվիզիոններ կայացուած են նաև Սարուխանի գրած թատերախաղերը, անուանի գերասաններու կատարումով: Այդ ներկայացումները պարզած են մեր արուեստագէտի տաղանդին ուրիշ մէկ երեսը:

Յանձին Սարուխանի մենք այսօր մեր մէջ կ'ողջունենք ներկայութիւնը բազմավաստակ արուեստագէտ մը և նայնքան վաստաւոր ազգային գործիչի մը:

Բարով եկաք Տիթրոյթ և յաջողութիւն՝ Ձեր ճամբորդութեան մնացեալ հանգրուաններուն մէջ:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 60ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ Ը

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

Հ.Բ.Ը.Միութեան 60րդ Ընդհանուր Ժողովը գումարուեցաւ Շաբաթ, 27 Հոկտեմբեր 1973, առաւօտեան ժամը 10.30ին, Հայոց Առաջնորդարանի Հ. և Ա. Գալուքճեան հանգրիսարանին մէջ, Նիւ Եորք, ատենապետութեամբ Միութեան ցկեանս նախագահ Տիար Ալեք Մանուկեանի: Գերագոյն այս հաւաքին մասնակցեցան 105 իրաւասու անդամներ, որոնք կը ներկայացնէին 1205 իրաւասու ձայներ:

Նախագահ Տիար Մանուկեան բովանդակալից ճառ մը խօսեցաւ, որուն ընթացքին տեղեկացուց թէ 1972 տարիչըջանին Միութիւնը ազգապահպանման նպատակներու համար տրամադրած է 1.818 220 տոլար:

Սօսք առին նաև ընդհանուր Տնօրէն Տիար Միսակ Հայկենց, ինչպէս նաև Կեդր. Վարչ. Ժողովի գանձապահ՝ Տիար Արթին Ասլանեան:

Յետ միջօրէին ժամը 1.30ին կատարուեցաւ մասնակի ընտրութիւնը: Գաղտնիքուէարկութեամբ վերընտրուեցան ՊՊ. Ռիչըրտ Կրեկըրի, Յակոբ Տէրտէրեան, Սուրէն Ֆէսճեան, Տիգ. Մաքրուհի Յովսէփեան, Նուրհան Ֆուէնկեան, և իբր նոր անդամ Տոքթ. Բերկրուհի Սլաճեան, ազգային բարերար Օր. Լիլա Գարակէօզեանի փոխարէն, որ առողջական պատճառներով հրաժարած էր:

Մինչ քուէախուզութիւնը կը կատարուէր, Կեդր. Վարչ. Ժողովի ատենադպիր՝ Տիար Ռիչըրտ Կրեկըրի ժողովին յայտնեց, թէ այս տարի կը լրանար Տիար Ա. Մանուկեանի Հ.Բ.Ը.Մ.ի նախագահութեան 20ամեակը: Ան սրտագին մաղթանքներ յայտնելէ ետք, առաջարկեց որ Միութեան բոլոր շրջանակները հանգրիսաւորապէս նըշեն Տիար Մանուկեանի նախագահութեան 20ամեակը, յառաջիկայ տարուան ընթացքին:

Կարգ մը ելոյթներէ և թելագրութիւններէ ետք Հ.Բ.Ը.Միութեան 60րդ

Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 1972-1973 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐԸ

Հաճոյքի ունիմի հաղորդելու, որ 1972-1973 տարեշրջանին Միութիւնս ունեցած է Յովակիմեան ուսանողներէն՝ երեք երկսու շրջանաւարտներ, որոնք փայլուն յաջողութեամբ աւարտած են իրենց երկրորդական ուսումը: Անոնք են՝ — Գանիրեհէ՝ Օր. Աննա Բերդշեան (Էֆօլ Պօն Փասքոր) եւ Պր. Մկրտիչ Փայլազ-

եան (Սեկր Ժորժ Քոլիմ), իսկ Աղեփանդիային՝ Օր. Անահիտ Փաշանճեան (Էլ Մանար Կըրղ Սֆուլ):

Ձեռնորհն կը շնորհաւորենք մեր շրջանաւարտները եւ նորանոր յաջողութիւններ կը մաղթենք:

ՆՈՐ ԿԵԴՐՈՆ ՄԸ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ ՏԻՍԸ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՆՈՒԻՐԵՅ 400.000 ՏՈՒՐ

ԱՂԵՔՍԱՆԳՐՍԱԶԱՅ ԿԵԱՆՔ

Վերջերս Թորոնթոյի մեջ նշուեցաւ մրութեան 67րդ տարեդարձը «Շերաքըն» պանքոյի տրամադրութեամբ մեջ: Օրումս պատուոյ հիւրն էր Անեթիպայի Կեդր. Յանձնաժողովի ասեմեայի Տիար Եղուարդ Մարտիկեան: Հանդիսը վարեց Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.ի Մանածոյովի ասեմեայի Տիար Կարօ Գալուսեան, որ օրումս հիւրը ներկայացնելէ ետք, յայտնեց թէ Թորոնթոյի մասնածոյովը պնդի զաղափար մը ունեցած է՝ յիմեջ նոր Կեդրոն մը, չորս տարիներ Թորոնթոյի Բարեգործականին նուիրում տալու հետքաւոր հողին վրայ:

Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ ՊԱՍՔԷԹ ՊՈԼԻ ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ինչպէս ասին տարի, այս տարի եւս Աղեփանդիոյ Հ.Մ.Ը.Մ.—Նուպարի վարչութիւնը կազմակերպած էր միջ-խաղաղային պատիւ պոյի հայկական մրցաշարքը, նախագահութեամբ Միութեան պատուոյ նախագահ, Աղեփանդիոյ Պատկ. աղափական Ժողովի ասեմեայի եւ Հ.Բ.Ը. Միութեան Կեդր. Յանձնաժողովի անդամ Պր. Վանան Աղեփանեանի: Այս տարում մրցաշարին մասնակցեցան Գանիրեհի եւ Աղեփանդիոյ բոլոր հայ մարզական ակումբները:

Այս ուղղութեամբ խօսք տուաւ Տիար Եղ. Մարտիկեան եւ տեղեկացուց թէ զիման նախագահ Տիար Ալեք Մանուկեան սիրով ընդունած է այն առաջարկը եւ այս սուրիս նուիրած է 400.000 տոլար: Այս յայտնեց թէ ինքն ալ սիրով պիտի հոգայ Կեդրոնին կամաւորան մասնակցելը, որը կը գնահատուի 100.000 տոլարի: Ընդհանուր խանդավառութեան մեջ, Տիկ. Բերդշեան նուիրեց 100 000 տոլար, իսկ Սեփերեան-Սարեան ընտանիքներու կողմէ 20.000 տոլար, նոյնպէս ի նպաստ շինութեան: Երկուստեւ ծախիւրով գնահատուեցաւ այս շոջակեղի նուիրատուութիւնները:

Այսպէս, Գանիրեհէ՝ Հ.Մ.Ը.Մ.—Արարատ, «Նիւր Իսք» եւ «Մրբունի Թերեզա» ակումբները իսկ Աղեփանդիոյ «Կալֆ» եւ Հ.Մ.Ը.Մ.—Նուպար ակումբները մասնակցեցան մրցաշարին. որ տեւեց 3 օրեր, 20, 21 եւ 22 Յուլիս 1973, եւ տեղի ունեցան Աղեփանդիոյ Հ.Մ.Ը.Մ.—Նուպարի խաղաղարին վրայ:

Ընդհանուր Ժողովը փակուեցաւ ժամը 4.30ին:

Առաջին մրցումները տեղի ունեցան Ուրբաթ, 20 Յուլիսին. Այս մրցումին յաղթական եղան Աղեփանդիոյ «Կալֆ»ը եւ Գանիրեհի Հ.Մ.Ը.Մ.—Նուպարը, պատրաստեան մասնակցով «Նիւր Իսք»ի եւ Հ.Մ.Ը.Մ.—Արարատի խումբերուն:

ՏԵՂԵԿԱՏՈՒ» պարբերաթերթը եւս երախտագիտութեամբ կը շնորհաւորէ ցըրեանս նախագահ Ալեք Մանուկեանի ՉՍՈՒՄ-եակը, եւ արեւջատութիւնն ու յաջողութիւնն կը մաղթէ իրեն, ինչպէս նաև իր ազնիւ կողակցին՝ Տիկ. Մարի Մանուկեանի:

Կիսատարական մրցումները տեղի ունեցան Շաբաթ, 21 Յուլիսին: Այս մրցումներուն

«Կալֆ» շաղթեց «Աղեֆսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.—
Նուպարի եւ Գանիրեի Հ.Մ.Ը.Մ.—Նուպարը»
«Ա. Քերեզա»յի:

Կիրակի, 22 Յուլիս 1973 կ.ե. ժամը 7ին
Տեղի ունեցան աւարական մրցումները: Առա-
ջին առթիւ Տեղի ունեցաւ սաղսնեցի մը՝ ֆայերգի
նուագածութեամբ, որուն մասնակցեցան մրցորդ
բոլոր խումբերուն խաղացողները: Ապա խօսք
ստաւ Պր. Յակոբ Անուրեան եւ նշեց, որ
Եզրիսոսի Յեղափոխութեան առթիւ կազմա-
կերպուած այս մրցաշարքը հայերու կողմէ,
մասնակցութիւն մըն է այն զանազանութեանց՝
որով Տեղի կ'ունենան երկրի մէջ:

Առաջին մրցումը Տեղի ունեցաւ, նախորդ
օրուան երկու պարտեալ խումբերուն միջեւ,
Գասաւորման գ. եւ դ. Տեղերուն հասնաւ: Այս
մրցումին յաղթանակը տարաւ «Ա. Քերեզա»յի
խումբը, 53ով 41 արդիւնքով:

Վերջին մրցումը, առաջին եւ երկրորդ
Տեղերուն հասնաւ խաղացին «Կալֆ»ի եւ Գա-
հիրեի Հ.Մ.Ը.Մ.—Նուպարի խումբերը: Այս
մրցումը խիստ հետաքրքրական էր: Կիսախաղը
վերջացաւ «Կալֆ»ին առաւելութեամբ 18-ով 15
արդիւնքով: Բ. խաղակիսին, Հ.Մ.Ը.Մ.—Նու-
պարի խումբը յաղթեց 47ով 40 արդիւնքով:
Այսպէսով Հ.Մ.Ը.Մ.—Նուպար (Գանիրե) շի-
րացաւ բաժակին եւ առաջնութեան մնայնիւ-
րուն:

Մրցումներէն ետք զանազանութիւնը շա-
րունակուեցաւ խրատմանի պարսնակցիսով մը,
որը Տեղեց մինչեւ ուշ գիշեր:

Շնորհաւորելի են Գանիրեի Հ.Մ.Ը.Մ.—
Նուպարի վարչութիւնը, Տիկնանց Յանձնախում-
բը, մարզիկները մանաւանդ նորընտիր գոյք,
որով ոչ մէկ ջանք կը խնային, բարձր պահե-
լու հասնաւ այս պատուական միութիւնը: Կեցցի՛ր
բոլորդ:

ՄԱՐԶԱՍԻՐ

«ՏԵՂԵԿԱՏՈՒ»Ի ՖՈՆՏԻՆ

Առ ի քաջալերուածին պարբերաթեր-
թիս ուղղութեան, հետեւեալ նուիրատուու-
թիւնները ստացանք.—

Տէր և Տիկ. Ժագ Առաքելեան 100
Ուր 100

Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐԻ
ՅՈՒՆԵԼԻՆԱԿԱՆ ՇՔԵՂ
ՊԱՐԱՆԱԳԻՆՆԵՐ

Աղեֆսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. Նու-
պարի վարչութիւնը, միութեան հիմ-
նադրութեան յիսնամեակին առիթով
(1923-1973) Շեղ Պարահանդէս մը
կազմակերպած էր, որ Տեղի ունեցաւ
Շաբաթ, 21 Յուլիս 1973, կ. ե. ժամը
10էն սկսեալ, «Շոք Գլապ»ի նաւա-
ւահին մէջ:

Աւելի քան 450 հոգի ներկայ
զգնուեցան այս պարահանդէսին: Ա-
ռաջնակարգ նուագախումբ մը՝ «Տհր
Քրէյվա», այս առթիւ հայկական
էսքրասային երգերու շարք մը իր յայ-
տագիրին վրայ աւելցուցած էր, ինչ
որ մեծ խանդավառութիւն ստեղծեց:

Ակումբին կողմէ շատ կանոնաւոր-
աբար սպասարկուեցան նաւերը, որ-
ուն յաջորդեց արժէքաւոր պարգե-
ներով վիճակահանութիւնը:

Ճոխ ծանուցումներով գրեյվ մը
հրատարակուած էր, որ նիւթական
Եօթափեղի Եան մը ապանովեց միութեան,
ինչ որ պիտի օժանդակէ իր
մարզական գործունէութիւնը յաջողու-
թեամբ շարունակելու նպատակին:

Այս շեղ ու շաք մթնոլորտը Տե-
ւեց մինչեւ առաւօտեան առաջին ժա-
մերը:

Կողոններն Աղեֆսանդրիոյ Հ.Մ.
Ը.Մ.-Նուպարի յիսնամեայ յօբելեանը
եւ կը մաղթեն յաջորդող պատմական
տարեթիւեր՝ սոյն ազգաւէն միութեան,
որ իր արդիւնաւէտ բաժինը կը բերէ
սփիւռֆահայութեան երիտասարդու-
թեան հայապահպանման գործին:

Ա.

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ Ը

ՅՈՒՇԱՐԱՐ - ՄԻՈՒԹԻԻՆ

Պատժանաբերք Հ. Բ. Ը. Միութեան
Հիմնադիր՝ Պօղոս փառա նուպար

HOOSHARAR - Անգլիերէն Հրասարակութիւն

Հասցէ. — Armenian General Benevolent Union
628, Second Avenue
New - York N. Y. 10016.

ԽՕՍՆԱԿ

Պատժանաբերք Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի
Շրջանակային Յանձնաժողովի
Հասցէ. — Նամակասուփ 715, Պէյրուք.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հրասարակութիւն Գանիբէի Հ. Բ. Ը. Միութեան
Հասցէ. — 15, Էմաս Էլ Տիմ փողոց — Գանիբէ
Փոստարկդ 717

ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐ

Հրասարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի
Շրջանակային Կեդրոնական Յանձնաժողովի.
Հասցէ. — 11, Square Alboni Paris 16^{me} FRANCE

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ — ԳԱՀԻՐԷ

Գահիրեի Հ. Բ. Ը. Միութիւնը հանոյքն ունի տեղեկացնելու պատուարժան հանրութեան թէ, իր հիմնած

Ե Ա Գ ՈՒ Պ Ա Ր Թ Ի Ն

գրադարանը որ կը գործէ 1958էն ի վեր, իր տրամադրութեան տակ ունի գրական, պատմական, գեղարուեստական, կրօնական եւ բանասիրական. ինչպէս նաեւ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆԻ զիբրերու նոյն հասարածոյ, որմէ կրնան օգտուիլ մեր ընթերցասէր անդամները եւ Գահիրեի հայութիւնը անխտիր, առանց որեւէ վնասումի:

Վ Ա Ր Զ ՈՒ Թ Ի Ն

Տ Ե՛Ղ Ե Կ Ա Տ ՈՒ Ն Վ ն ա ռ ո Վ ի չ Է

Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուիրատուութիւններ, մեր այս ձեռնարկը աւելի նոյն եւ շահեկան ընծայելու համար:

— Ստանալու համար դիմել իմբագրութեանս,
15, Էմաս Էյ Տիմ փողոց Ա. յարկ — Գահիրէ

Ստորագրեալս՝

կը նուիրեմ Ե.Գ. ()

«Տեղեկատու»ի Ֆոնսին:

Ստորագրութիւն



رقم الايداع بدار الكتب ٦١٣

ՏՊ. «ԱՐԳՈՍ» ԳԱՀԻՐԷ — ՀԵՌ. 56864